

ԵՌԱԲՆՈՒ

հագույն որակներ ժառանգել է հորիցս և հորս անմիջական ազդեցությամբ է կերպարվել: Ազնվություն, պատվասիրություն, աշխատասիրություն, նվիրվածություն, նպատակասլացություն — ահա այն որակները, որով հայրս հայտնի ու ընդունված է իր միջավայրում:

Տղաներս մաքրախոս են: Ինքս մեծացել եմ մի ընտանիքում, մի միջավայրում, որտեղ հայիոյեր, հատկապես կնոջ ներկայությամբ, ամենամոթալի երևույթն է: Վեց տարեկան էր Վահագնը: Անցնում եմ կողքի թաղով, մի կին մոտենում է ինձ, թե՛ Վահագնը տղայիս ծեծել է: Մեջս գարմանում եմ:

— Լավ, — ասում եմ, — կհարցնեմ տեսնեմ ինչ է եղել:

Գալիս եմ տուն, հարցնում եմ Վահագնին, թե ծեծել է այդ կնոջ երեխային: Ասում է՝ հա, ծեծել եմ:

Ասում եմ՝ ամոթ է, ինչ է արել, որ ծեծել ես:

Թե՛ ուշուց ատվալ (հայիոյեր է): Ասում եմ՝ ինչ է ասել թե՛ ես թեզ մոտ չեմ կարող էր բառերն ասել:

Հողի, Հայրենիքի, ծննդավայրի, մանկության տան սրբազանության անդավաճանությունն ինձ գանգ Արցախին, ինձ հետ՝ նաև տղաներիս: Ես իմ գործն էի անում, ու անում էի ամենայն պատասխանատվությամբ, խղճի մտքով: Ես սերունդ էի կրթում ու դաստիարակում, սերունդ, որ վայրագորեն տարան ոչնչացման, դավաճանաբար թողեցին անթիկունք:

Երբ Ապրիլյանի առաջին օրվա ուշ երեկոյան Վահես՝ զինվորական հագ ու կապի մեջ, պիտի դուրս գար տնից, մի պահ կանգնեց, նայեց այլայլված դեմքիս, ասաց. «Մամ, յուրաքանչյուր մայր, երբ տղա է աշխարհ բերում, պիտի մտածի, որ մի օր նա գնալու է հայրենիքը, իր տունը, իր մորը, իր քրոջը պաշտպանելու: Հո չեմ սպասելու, որ գան գոռով տնից հանեն, ես գնում եմ»: Գնաց ու երեք ամսից վերադարձավ հասուն պատվոգրով:

Սեպտեմբերի 26-ի երեկոյան մենք աշխարհի ամենաերջանիկ ընտանիքն էինք Ստեփանակերտի Կոլցնոյի բանկերի շենքի իններորդ հարկի մեր տանը ու չգիտեինք,



Վահագնը հինգ տարեկանում:



Վահագնի պապը սպասման ճամփեզրին: Սկզբում հորը՝ Մեծ հայրենականից, հետո որդուն՝ սովետական բանակից, իսկ հետո Վահագնին...

Արցախյան շարժումը լիովին իր մեջ առավ նաև իմ ընտանիքը: Ազգային այդպիսի համախմբվածությունն ինքնին ոգևորիչ էր: Մենք հավատում էինք մեր պահանջի իրավացիությանն ու արդարացիությանը, անորտույց տանում էինք բոլոր զրկանքները, որոնց մեջ հայտնվել էինք 80-ական թվականների վերջերին և 90-ականների սկզբներին:

Կիսատված, կիսահագնված, ուրբալոծությունների տակ, բայց մի մեծ հավատ ունեինք, ու այդ հավատն էր, որ մեզ պահեց:

Պատերազմն ինքնին դժբախտություն է՝ զհտակցված, թե՛ չզհտակցված: Տազնապում էի, բայց մի ընդվզում կար մեջս, ուզում էի՝ արդարությունը հաղթեր, ուզում էի՝ մարդու ձեռքով գրված օրենքները գործեին: Երբ 88-ին, Արուսիկով հղի, «Լենին, պարտիա, Գորբաչով» և «Միացում» էի վանկարկում, զհտեի, որ ոչ ոք մեզ առանց արյան անկախություն կամ միացում չի տալու: Արյունը չուշացավ:

Առաջին պատերազմի հաղթական ավարտը մեզ, ասես, մոռացնել տվեց մեր սրբազան կորուստները: Կոնկրետ իմ ընտանիքը մեծ կորուստներ ունեցավ: Ամուսինս 92-ի ամառը ծանր վիրավորում ստացավ, իսկ 93-ի մարտի 3-ին Հաղուրթում յուրաքանչյուրի ձեռքով սպանվեցին ամուսնուս եղբայրները՝ Մարո և Հովիկ Մարգարյանները: Մինչև այսօր ջրի երես չեն հանված այդ սպանության պատվիրատուները: Մինչև այսօր մեր արյան մեջ միտում է թանկ կորուստների մրմուռը:

Ես պատերազմի մարդ չեմ: Ես ատում եմ բոլոր պատերազմները: Եվ ատել եմ միշտ: Այդ ատելությունը Տոլստոյից չի գալիս, Ռեմբրանտից չի գալիս, Մարգարանից չի գալիս, Չեմինգուեյից չի գալիս: Գալիս է իմ մանկությունից: Իմ մանկության տարիներին ես շոշափելիորեն զգացել եմ պատերազմի անավորությունը: Հայրս անհայր է մեծացել: Նրա հայրը գնացել է Հայրենական պատերազմ ու չի վերադարձել: Իմ Հայկանուշ տարը այրիացել է 29 տարեկանում և առանց ամուսին երեք զավակ է մեծացրել: Իմ Հրաչ հորեղբայրը կյանքում «հայր» բառը չի արտաբերել: Հորս տատը՝ Սանդուխտը, ծանր վշտից ողջամտությունը կորցրած, ամբողջ օրը սևերի մեջ՝ սուգ էր ասում. «Մամոսն, Է՛կ, Մամոսն, Է՛կ»...

Խճաբերում ողջամտությունը կորցրած մի կին էլ կար: Եթե իմ Սանդուխտ ազին բարձրաձայն ամբողջ օրը ողբում էր, ապա Նուբարը ոչ մեկի հետ չէր շփվում, չէր խոսում, սև շորերում, սմբած, հանդ ու չոլերն էր ընկնում, կորչում օրերով: Նրա երկու տղաները չէին վերադարձել Հայրենականից:

Ա՛վաղ, իմ երեխաների մանկությունն ու իմ հասունությունն էլ խեղվեց պատերազմով:



Խճաբերդի տունը, որտեղ անցել է Վահագնի մանկությունը:

որ 27-ի առավոտյան 7 անց 15-ին սկսվելու է պատերազմի արհավիրքը: Ու տղաներս, ինչպես յուրաքանչյուր կանտոնավոր հայրենասեր, մեկնելու են պաշտպանելու Հայրենիքը, Խճաբերդը, Խճաբերդի մեր տունը, ինձ, ինձսուսամյա հորս, Գիսանեին, Նոանեին, Օֆային, Կարինեին՝ չիմանալով, որ գնում են մատաղվելու, գնում են թիկունքից խփվելու, գնում են իրենց թանկ արյունը ջուր դարձնելու:

Դարերի անձեռք հայրենիքի գաղափարը գրոյացնողներին, նրանց, ովքեր ստիպեցին հազարավոր մայրերի սգասցանք դառնալ, հազարավոր տնավեր մարդկանց անպատակ ապրելու պատճառը դարձան, հարյուրավոր անհայր երեխաների խեղված ճակատագրերի հեղինակները դարձան:

Ես տղաներիս ճակատային օրերի մասին մանրամասներ չգիտեմ: Այդ ողբնայ օրերին բավարարվում էի միայն նրանց ձայր լսելով, եթե նրանց հաջողվում էր գանգել: Աղերսում էի Աստծուն մտքում, բարձրաձայն, ծնկաչոք, ձեռքերս վեր կարկառած, բոլորի համար էի աղոթում, պատերազմի արհավիրքի մեջ հայտնված մեր բոլոր տղաների:

Ա՛Վ Ա՛Ղ...

Ինչ օր ու գիշեր, ինչ տրամադրություններ, ինչ մտանքումներ է ունեցել Վահագնը քառասունմեկ օր շարունակ, չգիտեմ: Միայն այն գիտեմ, որ մինչև վերջին

պահը կանգնած է եղել հրամանատարի մոտ և դիրքերը չի լքել, ինչպես շատերն այս հրեշալի պատերազմում:

Վահեսն իրենց դիրքերից գանգել է Վահագնին՝ որպիսությունն իմանալու ու ասում է՝ հաստատակամ ձայնով Վահագնն ասել է. «Գանգնած եմք, որքան դիմանանք դիմանանք»: Այս մի հատիկ նախադասությունը խորհել է տալիս դիրքերում տիրած իրավիճակի մասին և այն մասին, որ մեր լույս գավակները՝ աշխարհ եկած արարելու, իրենցով կյանքը բազմագունացնելու համար, գնացին զհտակցված ինքնագոհության, գնացին նահատակության: Նոյեմբերի 4-ին արցախից լրագրող Դավիթ Վանյանը դիրքերում հանդիպել է Վահագնին, ասում է՝ խորիստ կանգնած էր, առանց որևէ խուճապի:

Բայց պատերազմն իր դաժան օրերներն ունի:

կորցրել՝ միակ եղբորս: Անմարսելի վիշտը հոգու մեջ՝ հաշտ էր վերջի հետ: Հայրս տեղափոխվեց ինձ մոտ: Հատուկ ուշադրություն ու վերաբերմունք ուներ Վահագնը հորս հանդեպ: Մորս մահից հետո գյուղ գնալ-գալը ավելի հաճախակիացավ: Ամառային արձակուրդներս, սկսած 2012-ից, անց էի կացնում Խճաբերդում: Վահագնն էր ինձ ու հորս տանում: Անխոս, ամեն ինչում օգնում էր, որ արագ մաքրեմ, կարգի բերեմք ամիսներով չքնակեցված տունը: Ետ բերելուց՝ ընտանիքով էր գալիս, երբեմն Վահեսն էր միանում մեզ, ամբողջանում էինք մեր փոքր մուրաբակում՝ վայելելով համազրուցանքի անմնացորդ բարյացակամությունը, ջերմությունը, իրար հերթ չտալով՝ գյուղական անարատ մթերքներ էին բաժին հանում մեզ, հյուր կանչում: Մտնողավայրում անցկացրած այդ մի քանի շաբաթն ինձ նոր ուժով, լույսով, ապրելու և արարելու տենչով էր համակում: Հիմա կորստներիս ցավն իմ մեջ չի լուծվում, բողբոջս առ աշխարհի հսկա ապառաժ է: Այս էլ որբերող անգամ աշխարհի քարացած անտարբերության մեջ ամեն ինչ կորցրինք, ամեն ինչ: Ոսոխի հրթիռակոծությունից Խճաբերդի տները գրեթե անխտիր հողին են հավասարեցված: Իր օրում գավթիչի ոտք չտեսած Խճաբերդը ինչ-ինչ հանգամանքներում նվիրաբերվեց ոսոխին: Եվ ոչ միայն Խճաբերդը...

Վահագնի համար սրբության սրբոց, բարձրադիր Կատար վանքը, որը Վահագնի և Օֆայի ուխտատեղին էր: Ամենացորդ հավատով հավատում էին, որ Գիսանեին իրենց նվիրել են Կատար վանքի հրեշտակները: 2018 թվականի օգոստոսյան մի պայծառ առավոտ, Գիսանեին ուսերին առած, Օֆայի հետ Վահագնս նորից է բարձրացել Կատար վանք ու մատաղ մատուցել:

Աստծու հրաշքին հավատում էր: Մեր Աստվածը միշտ մեզ հետ էր, մեր մեջ էր: Բայց այս անգամ Աստվածն էլ անկարող եղավ: Պարզվում է՝ Աստված նեղից սարսափում է:

Թե՛ ինչ էն նշանակել Վահագնի համար, երբևէ չեմ քննել, չեմ վերլուծել: Պարզապես նրան լուռության մեջ վայելում էի, գորանում էի նրա մերձությունից:

Ամեն պահ նրա, երեխաների հետ լինելը տուն էր ինձ համար: Շատ էր սիրում իմ պատրաստած կերակուրները, խորտիկները: Համոտեցնում չէր լոխ, կարծիք կասեր: Մի օր ասաց. «Մամ, քո պատրաստած կուրկուտի ու ժենյավով հացի համը ես ոչ մի տեղ չեմ առնում»: Ու «մամը» առանձնահատուկ երանգով էր ասում, մի տեսակ երկարացման ու հարցական նշանների համատեղմամբ, սրտաբուխ, քաղցր...

2016-ի ապրիլ-մայիս ամիսներին առողջությունս կտրուկ վատացավ: Եկա Երևան ստուգման: Պարզվեց՝ լուրջ վիրահատության պիտի ենթարկվեմ: Քույրս, որ Երևանում է ապրում, երեխաներիս հավաքեց շուրջս: Վահագնը մի գիշերվա մեջ հասավ ու հայթայթեց վիրահատության համար անհրաժեշտ գումարը: Ինձ ճշմարիտ ախտորոշումը չէին ասել: Մտածում էի՝ հիվանդացել եմ, կառողջանամ: Հաջող վիրահատությունից հետո իմացա, թե՛ ինչ տագնապալի պահեր են ապրել երեխաներս, հարազատներս ինձ համար: Վահագնը ապաքինմանս համար Խճաբերդի հինգ սրբատեղիներին մատաղ էր խոստացել և ի կատար ածեց խոստումը: Աստված ինձ կյանքի դարձրեց, որ վայելեմ երեխաներիս, նրանց սերը, նրանց ինձ խնայելը:

Հիմա խառն են մտքերս, հիմա փոթորկված է հոգիս, հիմա հանգիստ չունեմ, հիմա ներհակ զգացողությունները ինձ իրենց փշերի մեջ են առնում ու օրերով բաց չեն թողնում: Մեկ-մեկ չապրելս արդարացված եմ համարում: Ու երբ հայտնվում են Վահագնի երկու հրեշտակները՝ Գիսանե և Նոանե, հասկանում եմ, որ դասապարտված եմ ապրելու, որ պարտավոր եմ Վահագնով լցված էությունս նրանց փոխանցելու:

Հիանում էի, երբ Վահագնը Գիսանեի և Նոանեի համար հանպատրաստից հեքիաթներ էր հորինում, ասում էի՝ գրի առ, կատարյալ են: Օ՞րհաղում էր:

Հիմա Վահագնը դաժանորեն ընդհատած, անվեջարս իմ հեքիաթն է, և ես ոչ միայն Գիսանեին և Նոանեին եմ հավատացնում, որ նա մեզ ժպտում է արևի ճառագայթների, աստղերի ջրվեղի, ձյան փաթիլների, անձրևի ձայնի, զարնանք բացվելից ծաղիկների երփնեբանգության ու բույրերի, մրգահոտ ամանն ու աշնան գունագեղությունների միջից, այլ անգորությունից են էլ եմ սկսում հավատալ դրան:

Ամեն Ետաբուր բարձրանալիս՝ փոքրանում եմ որպես մարդ, փոշիանում եմ ու միլիոներորդ անգամ ասում եմ. «Ներքի ր ինձ, զավակս, ներքի ր, որ ակամա վկան ու մեղսակիցը դարձա քաղաքակրթության նվաճումները մեկ ընդունում փոշիացրած դժխեմ այս ժամանակի»:

Ծաննա ԲԵՎԼԱՐՅԱՆ